ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 22

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ պարբերության պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել N 8 նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքի ավագանու կանոնակարգի ընդունում:
/ ԶԵԿ. Մ. ԹԵՎՈՆՅԱՆ/

2.Համայնքի 2016թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին
/ ԶԵԿ. Մ. ԹԵՎՈՆՅԱՆ/

3.Համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին;
/ ԶԵԿ. Մ. ԹԵՎՈՆՅԱՆ/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ
3. ՀՈՓԱԼՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՇՐՈՒՆ
5. ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ
7. ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 23-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ընդունել համայնքի ավագանու կանոնակարգը.
/կցվում է կանոնակարգը/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ
3. ՀՈՓԱԼՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
5. ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ
7. ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 24-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով .

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է `

1.«Ճանապարհային տրանսպորտ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածի ծախսը պակասեցնել 52000 դրամով: Ճշտված պլանը սահմանել 198000 դրամ:
2.<<Հանգիստ մշակույթ և կրոն>> /այլ դասեր / գործառնական դասակարգման ծախսային տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի ծախսը պակասեցնել 200000 դրամով: Ճշտված պլանը սահմանել 6712500 դրամ:
3.«Հասարակական կազմակերպություններին աջակցություն» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածի ծախսը պակասեցնել 160000 դրամով: Ճշտված պլանը սահմանել 340000 դրամ:
4.«Ճանապարհային տրանսպորտ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածի ծախսը ավելացնել 150000 դրամով: Ճշտված պլանը սահմանել 450000 դրամ: 4251 հոդվածի պլանը սահմանել 2522300դրամ:
5.«Փողոցների լուսավորություն» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածի ծախսը ավելացնել 250000 դրամով, 4239 հոդվածի ծախսը 100000 դրամով:
6. .«Կառավարման մարմնի պահպանում» գործառնական դասակարգման ծրագրի 5122 հոդվածի ծախսը պակասեցնել 30000 դրամով:
Ճշտված պլանը սահմանել 670000 դրամ:
7.«Ճանապարհային տրանսպորտ» գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5134 հոդվածի պլանը սահմանել 30000 դրամ:
8.<<Սոց հատուկ արտոնություններ>> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածի ծախսը պակասեցնել 350000 դրամ , ճշտված պլանը սահմանել 2650000 դրամ:
9.<<Ջրային կառույցների շահագործում և պահպանում>> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածի ծախսը ավելացնել 250000 դրամով, ճշտված պլանը սահմանել 370000 դրամ, 4269 հոդվածի պլանը սահմանել 100000 դրամ:
10.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել 1372944,90 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ
2. ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ
3. ՀՈՓԱԼՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
5. ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ
7. ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2016 թվականի N 25-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

Արալեզ համայնքի տարածքում 2017թ.համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

Հոդված 10 Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 12000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 250 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

բ)համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ:

գ) Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 170000 դրամ

դ) Խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ:

5 . Համայնքի տարածքում՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝ 15000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ

քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով ս յլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքի բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

9.Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

11. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա.-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 8000 Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1,5 մլն Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2,0 մլն. Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3,0 մլն. Հայաստանի Հանրապետության դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող.

ա/ Հողերի մրցույթ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար - 1000 դրամ

բ/ Հողերը օտարելու, աճուրդներ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար – 5000 դրամ

13. Աղբահանության վճարի սակագին սահմանել յուրաքանչյուր ամսվա համար

ա/ մեկ շնչի համար - 150 դրամ

Հոդված 11. **Տեղական վճարի դրույքաչափերի սահմանումը**

1. Տեղական վճարի դրույքաչափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ տվյալ գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով:

2. Ավագանին յուրաքանչյուր տեղական վճարի համար սահմանում է համայնքի տարածքում մեկ միասնական դրույքաչափ կամ սահմանում է տարբերակված դրույքաչափեր՝ հիմք ընդունելով համայնքի տարածքի՝ յուրաքանչյուր տեղական վճարի համար իր հաստատած գոտիավորումը:

3. Ընթացիկ տարվա համար տեղական վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՆԴՐԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ԱԻԴԱ

ՀՈՓԱԼՅԱՆ ՀԱԿՈԲ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ

ՇԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՉԱԹԱԼՅԱՆ ՆՇԱՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՍՈՒՍԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ